



Վանո Սիրադեղյան

Ձեռ ես տվել՝ խաղա

Այնինչ, դուք արդեն թոնում եք, «ազգայիններս»: Այդպես է, երբ բերանը չափ չի ունենում, ոտքերը պիտի պատրաստ լինեն ամեն պահ ծլկելու: Միայն թե պետություն ղեկավարելը թաղի լակոտների կոիվ չէ, որ մեր քրֆես ու փախչես: Ոչ էլ «ազգային ազատագրական» դաշաղություն, որ քրդի մի կով որպես մսացու մորթելու դիմաց հայկական մի գյուղ մատնես մորթվելու եւ սարով անցնես մյուս գավառ: Իսկ դուք, «փրկիչներս», պետության ներքին ու արտաքին հարաբերությունները իջեցրիք Ցախի Մեյդանի հայաթի (լակոտական) կովի մակարդակին: Երկիրը դարձրիք Թուլեքի Թագավորություն:

600 տարի երագածը, 80 տարի առաջ մեկ անգամ ձախողվածը, 7 տարիների ընթացքում կարոտով, արյունով ու սիրով հիմքերը դրածը: Որպեսզի ձեր քոսոտ տեսքը համապատասխան լինի միջավայրին (այս լեզուն դուք եք ներմուծել հայ մամուլ - ներողամիտ եղեք), փուշտունների փնթի բնագոյով ավերեցիք ու պղծեցիք ձեզանից առաջ եղած ամենայն բան - պետություն, գաղափար, ընկերություն, անուն, պատիվ եւ ավանդույթ: Եւ հիմա գնո՞ւմ եք: Հիմա նրանք դարձյալ գնում են... Առայժմ՝ պատասխանատվությունից: Իհարկե, հակառակորդին ուշունցի կապած ու հոխորտալով, որ կվերադառնան: Ինչպես վայել է կովից փախչողին: Ինչպես վայել է կոիվը գցող ու արանքը ճղող պրովոկատորին: Հիմա պիտի ձեւ անեն, թե հայտարարություն անելով ուզում են իրար (վոյին ու օյին) օգնած լինել Ամերիկայի բանակցություններից առաջ: Ճշմարտությունը, սակայն, այն է, որ եկել է հաշվենկատ ամուսնության վերջը, որովհետեւ դաշնակցության մեջ հաղթեց արեւելյան կլանը: Բարեբախտաբար, Իրանի իսլամական պետությունը սանձերը քաշեց՝ իրեն ենթակա Իրանի,

Միրիայի ու Լիբանանի Դաշնակցական մարմիններին արգելելով Մեղրին սարքել բազարի առարկա: Իր հերթին ռուսական սահմանապահ զորքերի հրամանատար Տոցկին նրբանկատորեն Մեղրու հատված տեսչական ստուգման չգնաց, ցուցադրելու համար, որ Հայաստանի այդ հատվածը Ռուսաստանը վստահում է Իրանի պահպանությանը՝ Ադրբեջանի, Թուրքիայի եւ Հայաստանի թուրք-դաշնակցական ալյանսի ունեցություններից:

Ահա թե ում ենք պարտական լինելու Մեղրին չկորցնելու համար: Իսկ Ամերիկայի դերը պարզ կդառնա շուտով: Քանի որ Հայաստանի համար միջազգային ամենատարբեր սանկցիաների շրջան է սկսվել, առաջիկայում Դաշնակցության հանդեպ Արեւմուտքի վերաբերմունքից կզգացվի՝ Ամերիկան ուզո՞ւմ էր Մեղրին օտարել մեզանից, թե՞ ոչ: Եթե դաշնակցականների ձեռքակալություններ եղան Արեւմուտքում, նշանակում է՝ այո, եթե՞ ոչ, ուրեմն՝ ոչ: Այո, այդքան պարզունակ եւ կոպիտ: Երբ դիվանագիտության լեզուն չեն հասկանում, իջնում են նաեւ այդ մակարդակին: Ինչպիսին Չորի Բալայանին ինտերպոլով փնտրելու դեպքն է: Դրան հաջորդած քայլը Ադրբեջանի արտգործնախարարի հայտարարությունն է՝ Քոչարյանին Խոջալուի համար դատի տալու մտադրության մասին: Եւ գործը Քոչարյանով չի սահմանափակվելու:

Կարծեմ, նոյեմբերին արդեն ասել եմ, որ ժամանակը կգա, մեզ կհիշեցնեն Խոջալուն: Ինչեւէ: Հասկացողը հասկանում է, որ նույնիսկ Ադրբեջանի ու Հայաստանի նման իքի-բիր պետությունների ղեկավարները չեն կարող իրենց թույլ տալ բանակցությունների նախօրյակին նման անարգիչ հայտարարություն անել, եթե այն համաձայնված չլինի շահագրգիռ կողմերի հետ: Եթե Ադրբեջանի արտգործնախարարը այդ հայտարարությունը անելու հաջորդ օրը չի պաշտոնազրկվել (որովհետեւ նրա հետ այլեւս ոչ մի արտգործնախարար ոչ միայն գրույցի չէր նստի, այլեւ ձեռքը չէր սեղմի), նշանակում է դա միայն Ադրբեջանի տրամադրվածությունը չէ, եւ, հետեւաբար, Քոչարյանի բանը բուրդ է: Նրան սպառնում է Միլոշեֆիչի ճակատագիրը: Այս փակուղում հայտնվելով՝ նա ամեն ինչի ընդունակ է: Այդուհանդերձ, սխալ են անում նրանք, ովքեր պահանջում են Քոչարյանի հրաժարականը: Հասկանալի է, որ տագնապած են երկրի ճակատագրի համար: Բայց հանում ենք այդ երկրի ապագայի՝ պետք չէ

դա անել, մանավանդ որ, վստահեցնում են ձեզ, այդ մտահոգությունը չի գնահատվելու: Այնպես որ, թողեք ինքը տրամաբանական վախճանին հասցնի այն ավանտյուրան, որ ձեռնարկել է 3 տարի առաջ: Չարժե այդքան թերագնահատել նրա մտավոր կարողությունները: Նա հասկանում է իր վիճակը եւ կուգենա երկիմաստ մի վիճակում արանքը ճղել: Պետք չէ այդպիսի առիթ տալ նրան: Թող մնա, որ գնալիս հետը տանի վարձկանների իր բանդան՝ իր քվեարկողներով, իր կեղծողներով, ծափահարողներով, գրչի ու լեզվի սագանդարներով, իր նման հետին թվով ֆիդայիներով ու պահեստապետական էկանամիստներով... Հայաստանի մթնոլորտը կարիք ունի միանգամից մաքրվելու ասիական բաղնիքի այն գարշահոտից, որ կախված է լինում օդում աշխարհագրի եւ մեդրեսների սաների խմբակային ու զանգվածային լոզանքից հետո: Տրամաբանական ավարտը անհրաժեշտ է, որպեսզի ժողովուրդը վերջապես հասկանա, որ գերագույն ազգային գաղափարը - ունեցած երկիրը շենացնելն է, ոչ թե չեղած բանի համար Կիկոսի դեգեներատ տնեցիների նման սուգուշիվան կապելը: Եւ որ երկիրը մարդուս նույն տունն է, ոչ թե ապուպապի գերեզմանին կից սպասարկող անձնակազմի բուդկա: Վերջին հաշվով, ձեռ են տվել-պիտի խաղան:

.

13.04.2001